ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

«05» փետրվարի 2024 թ.

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք

Ժողովի մասնակիցներ.

1) Մերուժան Մելիքսեթյան - Աբովյան համայնքի ղեկավարի օգնական - հանձնաժողովի նախագահ,

2) Աննա Չոբանյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի պետ - հանձնաժողովի նախագահի տեղակալ,

3) Արմեն Նալբանդյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարիչ - հանձնաժողովի անդամ,

4) Ռոզա Նալթակյան - Աբովյան համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար - հանձնաժողովի անդամ

5) Էմիլ Ղուկասյան - Առինջ բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

6) Ստեփան Հակոբյան - Արամուս բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

7) Գևորգ Հակոբյան - Բալահովիտ բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

8) Գոռ Հակոբյան - Գեղաշեն բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

9) Սամվել Թորոսյան - Գետարգել բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

10) Վահագն Բարսեղյան - Մայակովսկի բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

11) Վարդան Ներսիսյան - Կաթնաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

12) Հովհաննես Սարգսյան - Կամարիս բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

14) Հրայր Գրիգորյան - Վերին Պտղնի բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ,

15) Հովհաննես Մարուքյան - «Հանուն սահմանի» հասարակական կազմակերպության նախագահ - հանձնաժողովի անդամ,

16) Ալվարդ Սարգսյան - «Նանե» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ - հանձնաժողովի անդամ,

17) Լևոն Հայրյան - Պտղնի բնակավայրի բնակիչ - հանձնաժողովի անդամ,

18) Գայանե Սարգսյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի առաջատար մասնագետ - հանձնաժողովի քարտուղար:

Օրակարգ.

Աբովյան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում ներկայացված առաջարկ-նախագծերի քննարկում, համապատասխանության գնահատում՝ սահմանված չափանիշներին համապատասխան:

Լսեցին.

1. **<u>Հանձնաժողովի նախագահ Մերուժան Մելիքսեթյանին</u>**, ով ներկայացրեց Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 30-ի N 484 որոշման հավելված N 2-ով սահմանված մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկվող ծրագրերի համար սահմանված չափանիշները և նույն որոշման հավելված N 4-ով սահմանված գնահատման եղանակը:
2. **<u>Հանձնաժողովի քարտուղար Գայանե Սարգսյանին</u>**

   Նա ներկայացրեց Աբովյան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում հանրության կողմից առաջարկված ծրագրերը:

- ***Մանկական մարզական այգի*** - Մուշեղ Հակոբյան
- ***Թենիսի կորտեր*** - Ռիմա Մուրադյան
- ***Արհեստական լճակ և հանգստյան գոտի*** - Լիա Բարսեղյան
- ***Փոշեկուլ ավտոմեքենա*** - Հասմիկ Խաչատրյան
- ***Զբաղվածության կենտրոն*** - Հասմիկ Խաչատրյան
- ***Գեղաշեն և Կամարիս բնակավայրերում անցկացնել ոռոգման համակարգ*** – Գոռ Հակոբյան
- ***Պտղնիի կենտրոնական ճանապարհների կանաչապատում*** – Նվեր Հայրյան
- ***Պտղնի գյուղի մշակույթի տան վերանորոգում*** – Լևոն Հայրյան
- ***Այգիների բարեկարգում*** - Սամվել Հայրումյան
- ***Մուտքի դռների արդիականացում*** – Արամ Գրիգորյան

- ***Ճանապարհների բարեկարգում*** – Հրայր Լազյան
- ***Երգող շատրվաններ և ժամանցի վայր*** – Մարիամ Ավագյան

Հանձնաժողովը որոշեց.

1.

- Մուշեղ Հակոբյան - ***Մանկական մարզական այգի***
- Ռիմա Մուրադյան - ***Թենիսի կորտեր***
- Լիա Բարսեղյան – ***Արհեստական լճակ և հանգստյան գոտի***
- Հասմիկ Խաչատրյան - ***Զբաղվածության կենտրոն***
- Գոռ Հակոբյան - ***Գեղաշեն և Կամարիս բնակավայրերում անցկացնել ոռոգման համակարգ***
- Նվեր Հայրյան - ***Պտղնիի կենտրոնական ճանապարհների կանաչապատում***
- Լևոն Հայրյան - ***Պտղնի գյուղի մշակույթի տան վերանորոգում***
- Սամվել Հայրումյան - ***Այգիների բարեկարգում***
- Մարիամ Ավագյան - ***Երգող շատրվաններ և ժամանցի վայր***

Առաջարկները համապատասխանում են Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 16-ի N 03-Ա որոշմանը և Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 30-ի N 484 որոշման հավելված N 4-ով սահմանված չափանիշներին:

2. 1-ին կետով նշված ծրագրային առաջարկները ենթակա են հրապարակման համայնքի պաշտոնական կայքում և ներկայացվում են հանրային քննարկման:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մերուժան Մելիքսեթյան
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գայանե Սարգսյան
ստորագրություն